

սիրելի ընծայեր զնա տիկնոջ միոյ ազնուի բիւզանդացւոյ, եւ անդէպ է սիրոյ փոխանակ խեղդ հատուցանել:

– Դուստր Թորոսի (կին Հեթմոյ) կոչէր Ռիթա. իսկ գորդին՝ ոչ Ռուբէն այլ Լեւոն կոչեն հմտագոյնքն:

54. Մարաշայ առումն.

– Իբր ութ ամօք յառաջ քան զյանդուզն ձեռնարկութիւն Ստեփանէի, սուլտանն Իկոնիոնի Մասուտ՝ ՚ի ձեռն որդւոյ իւրոյ Գլրճ Արսլանայ կորզեալ էր զՄարաշ ՚ի Փռանկաց՝ տեարց նորուն (1149). զոր եւ ողբալով նշանակէր Ներս. Շնորհալի ՚ի չափաբան յիշատակի Առակաց գրոց.

«Ի ժամանակ յոյժ անբարի,

Մինչ Գերմանիկն առեալ լինի,

Ժամանեցին աշխարհի գոյժ,

Քրիստոնէից գոլով անոյժ.

Թուական Հայոց հինգ հարիւր եւ ութ

Նա եւ ութսուն երկուք եւ ութ»:

63. Բ. Թուականն 1347 ուղղելի է 1337:

64. Բերդորայք Կիլիկիոյ.– Յաւելլի են ՚ի ցանկի անուանց նոցին՝ Պինակ, յիշեալն ՚ի Տեղագրութեանս՝ յէջ 115. 85, Մոխրոտ, եւ Շուպլայ որք յիշեսցին յետոյ:

73. Պապառօն կամ Պապեռօն, Παπρίον ըստ Յունաց. յիշի առ Զենոնիւ յամս 480-8, արգելարան եղեալ Վերինայ կայսերուհւոյ եւ այլոց աւագաց. յորոց Պամպրեպիոս թեբացի՝ զահալէժ արարաւ ՚ի պարսպաց նորին:

77. Բ. Լամբրուն. – Ի հռովմէական մղոնաչափութեան Անտոնինեանց՝ Նամպիրոյ, Nampiro գրի, (եթէ ուղիղ է ընթերցուածն). եւ